

ՄԱՍԿ

Տարեկան գինը 10 ռուբլի է և տարվանը 6 ռուբլի:

Թիֆլիսում գրվում են միմյանի խմբագրատան մէջ:

Օտարաբանաբանը գրվում են ուղղակի
Тифлис. Редакция „Маск“

Խմբագրատանը բաց է առաւտեան 10—2 ժամ
(հացի կերակի և սոն օրերից)

Հայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Հայտարարութիւնների համար վճարում են
խրաբանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԴԱՎՈՒԹԻՒՆ

Բարաբարական վերջին անցքերը:—Ներքին տե-
սու ժողովուրդը: Ներքին ժողովուրդը:—
Արտաքին տեսութիւն: «Temps» լրագրի
թղթակցութիւնը: Խաղաղութիւն: «Մշակ» հեռագրի-
ներ: Յայտարարութիւններ: Բանասիրական
և լեզվաբանական մարդասիրական ընկերութիւնը:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՎԵՐՋԻՆ

ԱՆՅՈՒՆԵՐԸ

Ֆրանսիական հանրապետու-
թեան պատգամաւորների ժողովը
ամբողջ աշխարհի ուշադրութիւնը
իր վրա է դարձնում:

Լուսաւորութեան միաստորի
ներկայացրած օրէնքի նախագիծը
հոգեւորականներին կրթութեան
գործից հեռացնելով մասին աղ-
մալից նիստերի առարկայ դառ-
նում:

Բանապարտեան հրաւանցու-
թեան անգամ Պօլ Կասանեակը
վրա առաւ հոգեւորականութեան
պաշտպանի ամբօթալի գերը:

Չայրացած այն հանգամանքից,
որ պատգամաւորների ժողովը
Կասանեակին դատաստանի են-
թարկեց այս վերջինի լրագրի մէջ
տալիս կառավարութիւնը վերա-
ւորող յօդուածի պատճառով, միւս
կողմից նախագահից յանդիմանու-

թիւն ստանալով պատգամաւոր-
ների ժողովում իր անկայել վար-
մունքի համար, Պօլ Կասանեակը
յունիսի 16-ի նիստի ժամանակ
վերին աստիճանի յանդուգն և ա-
նամթ կերպով վարվեց:

Պօլ Կասանեակը պարբերա-
տական ամբիօնից լուսաւորութեան
միաստորին մեղադրեց անազնու-
թեան մէջ և հրաժարվեցաւ յետ
առնել իր խօսքը, երբ այդ պա-
հանջեց պատգամաւորների ժող-
ովի նախագահ Գամբետտա: Մեծա-
մասնութեան պահանջին համեմատ
Գամբետտա պահանջեց ժողովից
յանդիմանութիւն անել Կասա-
նեակին և ժամանակաւորապէս
զրկել նրան ժողովին ներկայ գը-
տնվելու իրաւունքից: Այդ առա-
ջարկութեանց յետոյ միապետա-
կանները, բանապարտեանները և
կղերականները այնպիսի աղմուկ
բարձրացրին, որ նախագահը սը-
տիպված եղաւ ծածկել իր գլխա-
րը և ընդհատել նիստը:

Երբ նիստը նորից գումարվե-
ցաւ, ժողովը ձայների բազմու-
թեամբ վճռեց խել Կասանեակից
ժողովը այցելելու իրաւունքը երեք
օր ժամանակով: Այդ միջոցին
Կասանեակ ֆրանսիական ամբողջ

կառավարութիւնը «անազնու» ա-
նունեց:

Կասանեակը այդ բառի պատ-
ճառով դատաստանի կենթարկվի
իբրեւ խռովարար, որովհետեւ նա
այլ ևս պատգամաւոր և մի և նոյն
ժամանակ օրէնքից պաշտպանված
չէր:

Ֆրանս-Վերմանական պատե-
րազմից յետոյ բոլոր ժամանակ
Ֆրանսիայում հանրապետական
կառավարութիւն էր, բայց կառա-
վարութիւնը միապետականների
ձեռքին էր և նոյա երկիրը կա-
ռավարում էին իրանց շահե-
րի, իրանց սկզբունքների համե-
մատ, մինչև որ վերջին ամիսնե-
րի ընթացքում կառավարութիւ-
նը հանրապետականների ձեռքը
անցաւ:

Ամբողջ այդ ժամանակամիջո-
ցում հանրապետականները թիե-
րի, Գամբետտայի և միւս նշանա-
ւոր ազատամիտ հայրենասէրների
առաջնորդութեամբ պատերազ-
մում էին կառավարութեան հետ,
աշխատում էին հանրապետու-
թիւնը ֆրանսիայի կառավար-
չական վերջնական ձեւը դարձնել
աշխատում էին յաղթող հանդի-
սանաբ:

Նոյն պատերազմը այժմ տա-
նում են միապետականները հան-
րապետականների դէմ: Բայց որ-
քան մեծ զանազանութիւն կայ
երկու կուսակցութիւնների վար-
մունքի մէջ, որքան մեծ զանազա-
նութիւն կայ այն միջոցների մէջ,
որոնց գործ են դրել երկու կու-
սակցութիւնները:

Հանրապետականները աշխա-
տում էին յաղթող հանդիսանալ
աղբերով հասարակութեան և ժո-
ղովների վրա խեղացի կերպով,
կենդանի խօսքի աղբեցութեամբ,
պատերազմում էին ազնիւ կերպով
խիկ միապետականները, կղերա-
կանները և բանապարտեանները
գիմում են անվայել, փողոցային
վարմունքի և խռովութեան:

Այդպէս կատաղած և անվա-
յել կերպով միշտ պատերազմում
է այն կուսակցութիւնը, որ իր
գործը կորցրած է համարում, որ
իր մէջ այլ ևս ոյժ չէ զգում, որ
մահուան է մօտեցել...

Եւ ճշմարիտ կարծես բոնա-
պարտեան Պօլ Կասանեակը, այդ
կուսակցութեան ամենայնադուգն
անդամը, զգում էր այն հարուա-
ծը, որ ստացան բոնապարտեան-
ները Աֆրիկայից, կարծես նա

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Մայիսի վերջերին Ն. Նախիջևանի Վարդապետ-
կան ընկերութեան անդամները ստացան մի տոմ-
սակ, որով հրաւիրուել էին յունիսի 13-ին ստոր
Խաչ վանքը հրաւիրուել, ընկերութեան 1878
տարվայ մոլից և երկր հաշիւն վերահաշուել լինելու
և նորա տարեգործը կատարելու:

Եւ որ քաղաքաւորութիւն չէի ունեցել յիշեալ
ընկերութեան անդամ լինելու պատիւը չունեցայ
ի հարկէ սպէ հրաւիրել ստանալու, բայց իբրեւ թղթ-
թակից մի ամենատարածված հայ լրագրի, պարտք
համարեցի անպարտաւոր ներկայ գտնվել այդ ժո-
ղովին, որը զանազան պատճառներով (որ ներքե
պիտի բացատրեմ) խոտորմում էր սաստիկ աղբի-
ւակից լինելու: Ձեռք կուզէ լինի առում էի ես իբրովի
—գուրս խօս չեն անի, ամենամեծ եթէ ամենայն
համեմատութեամբ մի անկիւնում պղծած կենամ և
վիճաբանութիւններին չը խառնվում: Գուցէ—յու-
սազրում էի ես ինչպէս լին—մեծ բազմութեան մէջ
ուշք էլ չեն դարձնի ինձ նման մի փոքրիկ անձ-
նաւորութեան վրա: Խիկ բազմութիւնը անշուշտ
մեծ պէտք է լինէր, ըստ որում այդ ընկերու-
թեան տարեգործին միշտ սովորութիւն է տալ մի
ճաշկերպ, բաղկացած գլխաւորապէս մատաղա-

հաս գաւառիկներից, որոնք ամբողջութեամբ խո-
րոված ու միջատաւոր փլաւով փոքրիկ եղած չա-
փազանց հրապուրիչ են մանաւանդ ու խաչ վանքի
հիմնալի օդին: Այո, այո, ասացի, պէտք է ան-
պատճառ գնալ, թող ինչ խաղաղաւորութիւն կուզէ
լինի... Իմ պաշտօնակիցները Ալեքսանդրապոլում և
Վ. Ալեքսանդրով խօս չեն վախճնում առաւել մեծ
փորձանքների դիմադրաւորութեամբ:—Ես ինչի պիտի վա-
խճնամ, և այն էլ մի ընկերութեան, որի նպա-
տակը մարդասիրութիւնն է:

Վերջապէս հասաւ ցանկալի կիրակին: Իմ բա-
րեկամ անդամներից մինը վարձեց մի կառք և
մեկը երկուքս առաւտեան ժամը 10-ին դուրս
եկանք քաղաքից դէպի ու խաչ հրամայելու: ան-
հեղաւ տարվայ ելից և մտից հաշուին վերահաշուել լի-
նելու և նորա տարեգործը կատարելու:

Վանքը կեցած է քաղաքից եօթ վերստ հեռա-
ւորութեամբ: մի փոքրիկ, տափարակ բարձրաւան-
դակի վրա, որի ներքե կայ մի գեղեցիկ պարտէզ,
փառքն ու պարտէզը Ն. Նախիջևանի, —միակ
տեղ, ուր մարդ մի քանի րօպէ աղատվում է ծա-
ռադուրկ քաղաքի անտանկի չորից և արարտիկի
փոշուց:

Վնեցալ ամի մէջ եկած յաճախ ու առատ ան-
ձրեկների պատճառով ճանապարհի երկու կողմի
դաշտերը ներկայացնում էին մեր աչքին առաջ մի
ուրախալի պատկեր: Յորեքը, զարին, կանախը և
այլ օգտակար բոյսերը շատ լաւ աճում էին խոտ-
տանալով մի բաւական առատ հում: Օրը հիմալին
էր և բոլորովին համապատասխանում էր մեր հո-
գեկան արամաւորութեան... Բայց փոխանակ օդը
և քնութիւնը նկարագրելու, որ բոլորովին դուրս է
իմ այս գրուածքի նպատակից, աւելի յարմար և
պատճառ իր լինի, եթէ ես մինչև Ս. խաչ համեմա-
կեմ իմ քանի խօսքը ասեմ Վարդապետի ընկերութեան

և որա ուսումնարանում պատահած վերջին անցքի
մասին:

Վարդապետական ընկերութիւնը Ն. Նախիջևա-
նի գոյութիւն ունի 15 տարիէ ի վեր: Սրա ծագ-
ման և զարուակութեան պատճառ եղել է գլխա-
ւորապէս պ. Նախիջևան Պօպոյանցը, որ ընկերու-
թեան հիմնադր զօրից ի վեր նորա նախագահ եղած
է: Ընկերութիւնը բոլոր իր գոյութեան միջոցին աշ-
խատած է միայն իր ժառանգաւորաց զարոյցի հա-
մար, որ գտնվում է վանքի մէջ և, իբրեւ վանքա-
կան հոգեւոր դպրոց, Վեհափառի հրամանով ստա-
նում է վանքի եկամտից տարեկան մօտ 1000 ռ.:
Սրա կրթնապատկը ծախսում է նոյն ինքն ընկե-
րութիւնը: Գաղտնիքով ուսանում են մօտ 20 աշա-
կերաններ, ըստ մեծի մասին ճիշտաւորներ և գիշեր-
թիկներ, և պատրաստվում են հոգեւոր կոչման: Մօ-
տակայ հայ գիւղից էլ կան մօտ 10—12 երթեկեկ
աշակերտներ, որոնք փոքր ինչ կարդալ գրել սովոր-
ելուց յետոյ իրանց ուսման չըջանը աւարտած են
համարում, չը համեմտվ մինչև անգամ առաջին
դասարանին: Ուսումնարանը բաղկացած է երեք
դասարաններից, որոնց մէջ հաշուելու է նաև նա-
խալիքարանը: Որքան մեզ յայտնի է, ուսման պը-
րօքում չը կայ, ուսումնարանը որքան և ինչպէս կամեանա ուս-
ուցիչները: Ուսումնական մասի վերահսկողու-
թիւնը յանձնված է Վեհափառից նշանակած ա-
բեղայ վանահօր, բայց մինչև այժմ եկած ու գնա-
ցած վանահայրերը բացի իրանց կրօնագիտութեանց
ուրիշ բաներից խաղաղութիւն չեն ունեցել: Այժմ
մասն վանահայրը կրօնը էլ կարողացած չէ դառ-
տալ, այս պատճառով հոգաբարձութիւնը հրաւի-
րում է քաղաքից մի երկուստարը քահանայ: Ընկե-
րութիւնը լաւ ճանաչած լինելով մեր հոգեւորական
ների անընդունակութիւնը ուսումնարան կառավար-

ելու գործում, իր խորհրդարանի 12 անդամների
միջից ընտրել է չորս հոգաբարձու, որոնք կառա-
վարում են դպրոցի թէ ուսումնական և թէ անու-
սական մասերը: Այդ չորս հոգեւոր անձնանք դիւր
խաղացողք եղել է և է պ. Պօպոյանցը: Խիսա
շատ անգամ ուսուցիչներ և ծառաներ միայն սա
է նշանակել: Միւսները իրենց անողորմական պատ-
ճառով ամենայն ինչ թողել սրա վրա, այնպէս որ
պ. Պօպոյանցը դարձել է կատարեալ ինքնիշխան
տէր դպրոցին, ուրեմն և բոլոր ընկերութեան վրա:
Ի հարկէ ինքնիշխանութիւնը շատ մեծ փաստ չէր
ունենայ, եթէ մեր պարտքը դպրոցական գործը
հասկացող մարդ լինէր և բաց յայտնաւ չունենար
մի շատ տարօրինակ բնաւորութիւն, որ թէև շատ
նպատակ է անդամներից տարեկան 6 ռուբլին
ստանալու, բայց դպրոցը կառավարելու բոլորովին
անկարմար և կարելի է ասել, փեսայարար էլ է: Պ.
Պօպոյանցի բնաւորութեան պատճառով է, որ զրու-
րոցի մէջ մարդավարի ուսուցիչ երբեք կարողա-
ցած չէ երկար մնալ, և շատ անգամ նշանակված
են եղել այնպիսի տղէտ և անբարոյական ուսու-
ցիչներ, որոնք ուսումնարանի անունը, ընդ ամին և
ընկերութեան վարկը բոլորովին կոտորել են քաղա-
քացոյց առաջ: Մանաւանդ վերջին ժամանակ պա-
տահած հետեւեալ զգուշի անցքը կարող է բաւա-
կան մեծ ազդեցոյց լինել պ. նախագահի անընդու-
նակութեան:

Պ. Պօպոյանցը, որ վաղուց յայտնի է իբրեւ կու-
րօքէն սիրող և անխախտ պաշտող մեր հոգեւորա-
կանութեան, սրանից 1—2 տարի առաջ պաշտպան
է հանդիսանում Հայաստանի կողմերից փախստա-
կան մի չափազանց տղէտ անձի, որ ինքն իրան
սիրացու էր անուանում, և սրան ոչ միայն պատ-
արարում է իր ուսումնարանի մէջ, այլ և կար-
գում է գիշերապահ խեղճ աշակերտաց վրա, խոտ-

Թէի նկատմամբ անհանգստի մի մասն են) պատրիարքութեան վիճակը: Նորին սրբազնութիւնը լուսաւորչական հայոց պատկանելի պատրիարքն ենք արդէն մի քանի ամիս ի վեր հրա- ժարական տուած է, բողոքելով խոտաւայած ընթացքներն յետաձգութեան դէմ: Թէև նա պաշտօնական յարաբերութիւններ չունի այժմ Բ. Դրան հետ, բայց և այնպէս շարունակում է վերահսկել ազգային շահերի վրա: Ընթացիկ գործերի անօրինութիւնը կատարութեան հետ յանձնված է պատրիարքի փոխանորդին, Մատթէոս սրբազանին:

Վնասելու ուրբաթ ազգայնոց ընդհանուր քուէարկութեամբ ընտրեալ հայ երեսփոխան- ների ժողովը իր նիստերը բացեց: Բացման ճառը կարդաց Մատթէոս սրբազանը: Այս արժանաւոր եպիսկոպոսը հասարակութեան զգացումներն թարգման հանդիսացաւ ուժգ- նակի քննադատելով Վնասելի պոլիտիկան: Նա յիշեց որ Բերլինի վեհաժողովում լորդ Սա- լըրիին հայերին նպատակաւ մի առաջարկու- թիւն անելին նկատած էր, թէ այդ առա- ջարկութեան նպատակն էր անսկիզբական ըն- թացմանը և ապագայի յառաջադիմութեան յոյսեր տալ հայերին, որոց շահերը աւելց- նում էր ազնիւ լորդը, պէտք է որ պաշտպան- վին այսուհետև: Նորա առաջարկը նշանակ- ված է 14. արձանագրութեան մէջ, իսկ 15-ի մէջ գտնվում է Բերլինի դաշնագրու- թեան 61. յօդուածի բնագիրը համապատաս- խան Ս. Ստեփանօի դաշնագրութեան 16. յօ- դուածին, որ խմբագրված էր Մեծ-Բրիտա- նիայի Է. Տաճկաստանի լիազօր դեսպանների միաբան հաւանութեամբ:

Սրբազանը համեմատեց լորդ Սալըրիի ընթացքը Բերլինի վեհաժողովի մէջ նորա այն ձառն հետ, որով նորեքս անգլիական միսիս- տըր յայտարարում էր թէ քրիստոնէայ ժողո- վաւորները չը պիտի յուսան անսկիզբական և էական ընթացքներ ստանալու ի պատճառս դրամական տագնապի, որ կաշկանդում է Բ. Դրան բարի կամբը:

Պատրիարքի փոխանորդը վիշտ յայտնեց ազգի կողմից, տեսնելով որ իրաւացի անկա- լութիւնը տակաւին իրազօրութիւն չէն, և ջերմ սրտով տեսնեց որ 61. յօդուածն ըստ կարելոյն շուտով կատարվէր: Ձը նայելով իւ- թեանց չար բարդին, ասաց սրբազանը իր ձառն վերջում հայերը անվանել հաստատութեամբ պահպանելին իւրեանց ազգայնութիւնը և, յոյս առ Աստուած, կարող կը լինին անյողդողդ պնդութեամբ պաշտպանել նորան մեր ջնջմ- մանը հետամուտ բոլոր ձգնութեանց դէմ:

Վերերի վիճակն աւելի պարզ ըմբռնելու համար պէտք է աւելցնել, թէ այս ազգը, որի արդար դատին ամեն մի ուղղափառ մարդ համակրում է, շատ հաւատ չէ ընծայում Վնասելի դեսպանին Վ. Պալմի մէջ: Նա այս երեւոյթի պատճառն ինքն ի յարգն է: Միթէ նա չէր որ նոր Լոնդոն գնալիս ասաց, թէ մուսուլմաններն աւելի վեր են քրիստոնէանե- լից և թէ Տաճկաստանի մէջ ազգայնու- թիւններին պաշտպան կանգնելը կը նշանակէ պատերազմ յարուցանել քան թէ խաղաղու- թիւն ապահովել:

Այդ մի անյաջողակ և թիւր վճիռ է: Արեւելքի քրիստոնէաները հարկաւ կատարեալ մարդիկ չեն, ինչպէս որ չեն և արեւմտեան- ները, բայց նոքա այս անժխտելի առաւելու- թիւնն ունեն մուսուլմանների վրա, որոց մի քանի արժանաւորութիւններ ու զէ ուրա- նում, որ նոքա յառաջադիմութեան սիրա- հար են և ձգտողք սեփական բերամբ ձեռք ձգելու նորան, մի առաւելութիւն, որի վրա նայելով ամեն մի ճշմարտիւ զգոն պետական անձն պարտ էր դադարել վարանելուց (fixer les irrésolutions):

Վեւերը չէ յիշատակել այս անթիւ որ հայերի պահանջները շատ արդար սահման- ների մէջ ամփոփված են: Նոքա խնդրում են հինգ զիւսուր ընթացքներ:

1. Դատաստանի ընթացք:
2. Վարչութեան ընթացք:
3. Ոստիկանութեան ընթացք:
4. Հայերի մասնակցութիւնը հայաբնակ գաւառների վարչութեան մէջ ի ձեռն հա- սարակային պաշտօնատարութեան:
5. Թոյլտուութիւն հայոց լեզուի այդ գա- լառներին մէջ իրեն պաշտօնական լեզու տա- կերէնին զուգընթաց:

Վոյսանից ամենախրաւարդին դատաստանական ընթացքի պահանջն է: Այս խնդրի վրա ես արդէն ստեղծ և հանգամանօքն խոսած եմ: Հայաստանի մէջ, որպէս Ապստոլութեան բոլոր միւս գաւառներում, քրիստոնէաները տակաւին ենթարկված են շէրիֆի դատող ատեան- ներին: Նոքա վիսյութիւնը չէ ընդունվում մուսուլմանների դատարանում:

Արդեօք դարձեալ յառաջ բերվում մի բաւա- կանին խրատական անցք, որ դեռ երկու տարի տուջ պատմած էի: Մի հայ շինական որոնում է իր կողմ, որ անհետացել էր, և գտնում է նորան հարեան գիւղի կողմի մօտ, ուր կենդանին փակված էր փրկանքի սպա- սելով: Դատարարը պահանջում է, որ շինա- կանը վիսյութիւնը ներկայացնէ: Շինականը գտնում էր գիւղը և նորից յետ է գալիս բոլոր հայ բնակիչների հետ միասին: Վերջինքս վիսյութիւն են յօգուտ նորա: Սակայն դատարարը չէ կա- մենում նոքա վիսյութիւնն ընդունել, ըստ որում նոքա մուսուլման չէն: Այդ միջոցին տագնապած շինականը, չուզելով գրկվել իր սեփականութեանց, մին որ միտք է յղանում: Նա խնդրում է որ ժամանակ տան իրան, և փոքր ինչ յետոյ վերադառնում է վարելով մի որթ, որ իր կողմ արգասիքն էր: Դորովական զգուհնք մօր և գաւառի մէջ: Նախ, որ մի զգայուն և արդարաւոր մարդ էր, վերադարձ- նում է անասունը իր տիրոջը: Մի հայ լրա- գիր այս անցքը պատմելով հետեւեալ բարոյա- կան եղբակցութեան էր գալիս, թէ Տաճ- կաստանի մէջ մի որթի վիսյութիւնն առա- լել արժէք ունի, քան թէ միլիոնաւոր քը- ռիստոնէաների վիսյութիւնը:

Հայերն ամեն միւս քրիստոնէաների պէս իւ- բաւունք ունեն ուրեմն պահանջելու, որ քա- ղաքային և քրէական գործերը խափա իրօնա- կան օրէնքով չը քննվեն այսուհետև:

Նոյնը ասել պէտք է և վարչական արտա- կենտրոնութեան մասին: Աւասիկ Բ. Դրան հե- տեւած անհեղեղ կենտրոնականութեան չա- թեաց մի պարզ օրինակը: Երգրումի վիսյութիւն տալիս է քանձարանին մօտ չորս միլիօն լիւրա տարեկան: Այս գումարից միայն մէկ միլիօնը դրոճ է անվում վիսյութիւն պէտքերի համար: Գործընդհանրական կրթութեան համար, նոյն իսկ պաշտօնավթերթի ասելով, յատկացվում է այս վիսյութիւն մէջ միայն 25,000 Փրանկի ծիծաղելի գումարը, այն էլ, չը մոռանալ, լի է պէտս իսլամական դպրոցների քանդի քրիստոնէական դպրոցների ծախքը ընկնում է իւրաքանչիւր ժողովուրդի վրա:

Վեւերը է բացատրել ոստիկանութեան վերաբերեալ ընթացքները կարեւորութիւնը այս գաւառների մէջ, ուր ջանասէր մշակը ամեն մի օր հարստահարվում է քուրդերից: Հայերը կամենում են որ պաշտօնատարների կէտը ազ- ղայինների թիւից նշանակվի: Նոքա խնդրում են, որ Բ. Դրան տաճկական լեզուի հետ զուգընթաց նաև հայերէնի պաշտօնական կրթութիւնը թոյլ տայ: Նոքա դիւրա- ցեց են տալիս, որ նոյն իսկ կառավարու- թեան համար օգտակար էր հայերին յանձնել հասարակային պաշտօնների մէկ մասն նոյն գաւառների մէջ: Այս ազգի պաշտօնական անձանց հաւատարմութիւնը երբէք հեր- քուած չը լինելով Բ. Դրան, Տաճկաստանի պետական մարդիկը մի իմաստուն քաղաքագի- տութեան հետեւած կը լինէին, թէ որ հա- յերն այս և միւս բոլոր պահանջները անյա- պաղ կատարէին:

Վուսաց ազգեցութեան դէմ Հայաստանի

մէջ մաքառելու համար ամենալաւ միջոցն է բաւականութիւն տալ ժողովուրդի յայտնած չափաւոր խնդիրներին:

Այդ խնդիրները այն ատիւնների իրաւացի են, ինչպէս խոստովանում է և ինքն թղթա- կիցը, որ նոքա փութանակի իրազօրութիւն- նը տեսչայի և անհրաժեշտ է արդէն յանուն և լոկ արդարութեան, առանց երկրորդական հաշիւների:

Փ. Վ.

ԻՏԱԼԻԱ

«République française» լրագիրը մի ձա- նապարհորդեց ասացել է հետեւեալ հետա- քրքիր նամակը, որը ուղղված է նրան Էտնա հրաբուխի այցելութեան տեղից: Ահաւասիկ այդ ձանապարհորդի նամակի բովանդակու- թիւնը:

«Հասնելով Միւնիւստագիոս քաղաքը, ես տեղեկութիւններ ստացայ այն հռչակաւոր քարէ և մակրէ անձրեւի մասին, որը, մի քանի լրագիրների խօսքերով, կիսով չափ ծածկել էր մի քանի գիւղեր: Իսկ ես հաւատա- տի աղբիւրներից տեղեկացայ, որ վերջինքս անձրեւը հազիւ թէ միայն մի քանի միլի- մետր խորութեամբ է ծածկել գետիցը:

Արեւը մայր մտնելու ժամանակ, ես ձանա- պարհ ընկալ Միւնիւստագիոսայից: Ազգային ձա- նապարհը (մեզ մօտ դրան թաղաւորական ձանապարհն անուանում) ծածկված էր ան- թիւ անհամար կաւքերի բազմութեամբ, որոնց վրա նկատելի էին բազմաթիւ օտա- բակներ, և սիրունաւորուն տիկիներ:

Ներքե ժամկայ ձանապարհից յետոյ, ես հասայ այն տեղը, ուր լավայի մի հեղիղ, մայիսի 30 գիւղերը անցնելով ձանապարհը, կործանել էր Պիւսիարօ անուանված կամուր- ջը: Այդտեղ լավան մի սև գոյն է ստանում, որովհետև այդ տեղից նա արդէն կորցնելով իր ջրմուտեան գոլուցիւնը, հեղցեալ սկսում է թանձրանալ, կամ աւելի լաւ- ասել, պնդանալ: Բայց փոքր ինչ հեռանալով ձանապարհից, տեղ-տեղ ջրված երևում է, որ այդ հիւթը դեռ պահէ իր կարմու- թիւնը: Նրկու մէտ տարածութեամբ կարելի է մօտեալ հիւթին, բայց դրանից աւելի անկարելի է առաջ գնալ, որովհետև այն ժա- մանակ լավայի տաքութիւնը անտանելի է դառնում: Հաւատացնում են, որ մի քանի մարդիկ այնքան յանդգնութիւն են ունեցել, որ կամեցել են լավայից սիգար փառել: Ես ասում եմ, որ մի անգլիացու ոտքը այրվել է լավայի մէջ:

Որովհետև դժուար էր այդտեղից մի ձիւղ զաղափար կազմել այդ կրակէ հոսանքի մա- սին, ուստի ես առաջ գնացի Վոժօի ձանա- պարհով, որպէս զի աւելի լաւ կարողանամ գննել այդ հրաշքը:

Այնպիսեանք գետի հովիտով անցած ժա- մանակ, ես նկատեցի, որ լավան գտնվում է գետից դեռ մի քանի հարիւր մետր հեռաւո- ռութեամբ:

Մի քանի օր սրանից առաջ մի քանի պարոններ ասում էին, որ լավան գտնվում գետից միայն 60 մետր հեռաւորութեամբ, բայց այդ պարոնները մոռանում են, որ Ա- կանաքա գետի այդ հեռաւորութեամբ զը- տնվող ձիւղի մէջ ներկայումս այլ ևս ջուր չը կայ, որ նա վաղուց արդէն ցամաքած է:

Ճն անցայ Այնտարա գետը մի փոքրիկ տափտակէ կամուրջով և երբ հասայ Վոժօ, ես նկատեցի, որ բոլոր աներից հանել են պատուհանների փեղկերը, դռները, ապակի- ները, և բոլոր այլ և այլ զարդարանքները: Ինչպիսեանք բոլորովին թողել են այս գիւղը տանելով իրանց հետ բոլոր, ինչ որ կարելի է եղել: Այժմ գիւղը դրաւած է մի քանի խումբ հետեւած և ձիււր գործերով:

Վոժօից շատ գեղեցիկ կերպով է տեսնվում լավայի բոլոր հոսանքը, որի տարածութիւնը այս օրպէս մօտ տասն և հինգ կիլո- մետրի է հասնում: Գլխաւոր հոսանքի մէջ լավայի լայնութիւնը հազար մետրից աւելի է: Այդ անասանը շքեղ է, և մի և նոյն ժամանակ զարհուրելի: Տաքացած երկաթից էլ աւելի կարծր ու բոցաձաձանջ հոսանքի վրա երբեմն-երբեմն նկատվում է մի տեսակ սպիտակափայլ բոց, զա առաջացել է հարիւր- ամեայ վիթխարի ծառերի այրվելուց, որոնք զոհ են գնացել երկրաբանական այդ հրեշաւոր երեւոյթին:

Վալայի ընթացքը բաւական զգալի կեր- պով մեղմացել է, և այդ երեւոյթը շատերը վերաբերում են նրան, որ իբր կրատներն երբանի ներքործութիւնը թուլացել է: Դա բոլորովին սխալ կարծիք է: Ընդհանրաւոր դրա պատճառը պարզ բացատրվում է հոգի

մակերեւոյթի դրութեամբ, որը այստեղ շատ փոքր է հակված: Լավան այժմ այլ ևս կա- նօնաւոր ընթացքով չէ հոսում, այլ նա ա- ռաջ է գնում, այսպէս ասած, ջրբնիցներ կազմելով: Ժամանակ առ ժամանակ լավան կանգ է առնում, և այդ կանգ առած տեղե- ռում նրա քանակութիւնը հետզհետէ աւե- լանով, երբեմն-երբեմն նա այնպիսի անբեւա- կայիլի բարձրութիւնների է հասնում, որոնց վրա նայողը կարծես թէ կրակի ահագին լեռների վրա է նայում: Ետոյ այդ լեռները, մի ահագին դժոյխային ձայնով խորտակվելով, առաջ են գնում մի քանի հարիւր քայլ և միմեանց վրա կուտակվելով, մի երկրորդ բար- ձրութիւն են կազմում, յետոյ մի երրորդ, և այսպէս շարունակ: Ահա թէ ինչով է բա- ցատրվում այդ հոսանքի ընդհանուր մեղ- մութեան պատճառը:

Դեռ միւս կողմը, ես հրեղէն լեռների մի ահագին շղթայ էի նկատում: շղթայի օղակ կազմող լեռներից իւրաքանչիւրն էլ գրեթէ ուղղահայեաց դիրք ունէր: Նիւթ լա- վան հասնի Ալկանտարային, որի մասին ես գրեթէ հաւատարմ եմ, նա կը հետեւի գետի աւազանի ուղղութեամբ:

«Italia» լրագիրը Էտնայի արտալիժման մասին հաղորդում է հետեւեալ տեղեկութիւն- ները, որոնք բազմաթիւ հեռագրական վեր- ջին լուրերից: Նա ասում է, որ արտալիժ- ժումը վերջապէս դադարեց: Լավայի երկու գլխաւոր հոսանքների այլ ևս առաջ չեն գը- նում: Աջակողմեան հոսանքը, որ առնում էր իր սկիզբը նոր բացված կրատներից, դա- դարեց Ալկանտարա գետից 440 մետր հե- ուստրութեամբ:

Դեռ էլի շարունակվում են լավի ստորեր- կրեայ մի քանի թիւթե զարկեր, բայց շարժը բոլորովին դադարել է: Էտնայի գլխաւոր կրա- տէրը ծածկված է մի տեսակ մրկախառն ծխով, որը սիւնաձև միալով, ահագին բար- ձրութեան է հասնում:

Արտալիժման բոլոր տեղութեան ժամա- նակ, հանդիսատեսներից ոչ ոք չը գնաւեց: Կարգապահութիւնը կատարեալ էր:

Բացի արտալիժման աղետալի հետեւանք- ները, Էտնայի երկաթային և մի ուրիշ չա- րիքի. այն է, որ Մանտուեից անցողից վեր- ջին հեռագիրները հաղորդում են, թէ Գետի հողակայանների խորտակվելը ահագին չարիք նիւթեց ամբողջ Մանտու նահանգին:

Ինչպէս և Արիւրից կոչված աւանների մէջ գտնված տարածութեան վրա տասերկու հա- մայնքներից աւելի, գիւղեր յանկարծ պաշար- վեցան ջրերից: Ինչպիսեանք, կորցնելով բոլոր իրանց հարստութիւնները, հազիւ հազ կա- բողանում են հողակայանների զազմութեան պայտասնելով աղետի իրանց կեանքը: Ճն- դային վարչութիւնները նոյնպէս ապաստանել են այդ բարձրութիւններին: Սրտապատառ տեսարաններ մարդու խիղճ են վառում: Որ կողմը նայես, երբեք, կործանվող աններ, խեղդված անասուններ, ջրի գոհ գնացած թանկագին իրեղէններ, աղետացած ընտա- նիքի հայրեր ու մայրեր են: Այս բոլորը հան- դիսատեսի վրա տեղուր ապաստութիւններ է դործում: Նիւթ քաղաքային վարչութեան ար- թուն հսկողութիւնը չը լինէր, ասում են, որ այդ աղետների թիւը բազմապատիկ կը լինէր, բայց իշխանութեան բարեկարգութեան շնոր- հիւ գոնե մարդոց զհերթի թիւը չնչին է:

Այսքան աղետներ կարծես բաւական չէին Էտնային, այս օրերս էլ Կատանի նահանգի Կալատարանիսօ քաղաքում, հարկերի բարձ- րացնելու առիթով, մի մեծ խռովութիւն ծաղեց: այդ խռովութեան միջոցին դիտար- ների և ժողովուրդի կողմից մի քանի մարդիկ սպանվեցան:

Ինչպէս երևում է, թշուառութիւն թշուա- ութեան վրա է հասնում Էտնայից, մի ամենավերջին հեռագիր էլ յուլիսի 11-ից հա- ղորդում է, որ Վեզուվը էլ սկսեց արտալիժել: Արտալիժումը գնալով աւելի է սաստկանում:

Մի ուրիշ հեռագիր էլ հաղորդում է եւրօ- պական մի քանի լրագիրներին, որ Վեզուվի այն թիւթե ներքործութիւնը, որ նկատվել էր մի քանի ժամանակէ ի վեր, այժմ հետա- հետէ սկսել է սաստկանալ: Յունիսի 10-ի նախընթաց գիւղերը, լավան արտալիժվելով կրատներից, հասել է մինչև Մարիո դէլ Կալա- լիօ: Հարաւային աստղաբաշխական դիտանո- ցից եւտագուն գնդուցութիւններ են անում:

«ՄԵԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
ՎԻԵՆԱ, 1325 յունիսի: Երէկ Բէյքա- տում սկսվեցան նոր ընտրութիւնները: 22

